ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 57/2

27-ը հունվարի 2022 թվականի

ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ